

SMS Converse / USSD ծառայություն

Ծառայության տեղեկատվական ամփոփագիր

08.01.2018թ.

SMS Converse բանկային ծառայության օգնությամբ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի հաճախորդները (այսուհետ՝ Հաճախորդ) հնարավորություն ունեն հեռախոսային կարճ հաղորդագրության՝ SMS-ի տեսքով ստանալ իրենց բանկային գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև՝ ստանալ 3D Secure համակարգի մեկանգամյա օգտագործման կոդերը (Verified by Visa և MasterCard SecureCode): USSD ծառայության օգնությամբ Հաճախորդը հնարավորություն ունի USSD հրահանգի միջոցով Բանկ ուղարկել տեղեկատվության հարցում կամ հանձնարարական:

Առանց հարցման ավտոմատ կերպով տրամադրվող տեղեկատվություն

Հաճախորդը SMS Converse բանկային ծառայության տրամադրման դիմում-հայտը և/կամ Քարտով կատարված գործառնությունների վերաբերյալ SMS հաղորդագրության ստացման դիմում-հայտը լրացնելիս նշում է գործարքի գումարի այն նվազագույն չափը, որը գերազանցելու դեպքում կստանա համապատասխան հաղորդագրություն: Մերժումների վերաբերյալ հաղորդագրությունները Հաճախորդը ստանում է անկախ գումարի չափից:

Այն դեպքում, երբ Visa կամ MasterCard քարտապանը ցանկանում է SMS հաղորդագրություններ ստանալ միայն 3D Secure համակարգի կողմից ուղարկված մեկանգամյա օգտագործման կոդերի վերաբերյալ, ապա հայտի գումար դաշտում ոչինչ չի լրացվում:

Ցանկության դեպքում՝ 3D Secure համակարգի կոդերը կարող են ուղարկվել Հաճախորդի էլեկտրոնային հասցեին:

Տեղեկատվության տեսակ	Յուրաքանչյուր հաղորդագրության արժեք՝ ներառյալ ԱԱՀ
Քարտային գործարք կատարելուց համապատասխան հաղորդագրության ստացում	<p>ՀՀ բջջային օպերատորների բաժանորդներ՝ 20 ՀՀ դրամ</p> <p>Արտերկրյա բջջային օպերատորների բաժանորդներ՝ 40 ՀՀ դրամ</p> <p>Գանձվում է Հաճախորդի (բաժանորդի) հեռախոսահամարի անձնական հաշվից</p>
Խնայողական/ընթացիկ հաշիվներով գործարք կատարելուց համապատասխան հաղորդագրության ստացում	<p>12 ՀՀ դրամ</p> <p>Գանձվում է խնայողական/ընթացիկ հաշվից:</p>
3D Secure համակարգի մեկանգամյա օգտագործման կոդեր (Verified by Visa և MasterCard SecureCode)	<p>0 ՀՀ դրամ</p>

USSD ծառայության միջոցով տրամադրվող տեղեկատվություն

USSD ծառայությունից կարող են օգտվել Հայաստանի Բիլայն և Վիվասել-USU բջջային օպերատորների բաժանորդները:

USSD ծառայության միջոցով հասանելի են հետևյալ գործողությունները.

- Քարտային հաշվի մնացորդի հարցում
- Քարտային հաշվի մինի-քաղվածքի հարցում (վերջին 4-5 գործարքներ)
- Քարտի բլոկավորում (Lost Card կարգավիճակ)

Յուրաքանչյուր հարցման դրական ավարտի դեպքում քարտապանը ստանում է SMS հաղորդագրություն ARCA USSD բաժանորդից:

Մեկ հեռախոսահամարին կարելի է կցել առավելագույնը 5 վճարային քարտ՝ անկախ թողարկող բանկից: 5 քարտի հաշվարկի մեջ մտնում են Արքա համակարգի անդամ այլ բանկերի քարտերը, որոնց համար ակտիվացված է USSD ծառայությունը:

Ծառայության ակտիվացումից հետո ծառայությունից օգտվելու համար Հաճախորդը համապատասխան բջջային հեռախոսահամարից ուղարկում է ***116# հրահանգը** և հետևում համակարգի ցուցումներին:

<p>USSD հրահանգի հաջող ավարտի դեպքում գանձվող միջնորդավճար՝ ներառյալ ԱԱՀ</p>	<p>ՀՀ բջջային օպերատորների բաժանորդներ՝ 20 ՀՀ դրամ</p> <p>Արտերկրյա բջջային օպերատորների բաժանորդներ՝ 40 ՀՀ դրամ</p> <p>Գանձվում է Հաճախորդի (բաժանորդի) հեռախոսահամարի անձնական հաշվից</p>
---	---

Ուշադրություն

Հաշվի առնելով, որ կարճ հաղորդագրության ուղարկման ծառայությունը մատուցվում է միջնորդավորված՝ Բանկը պատասխանատվություն չի կրում Բանկից ելքագրված կարճ հաղորդագրության՝ Հաճախորդի կողմից չստացման կամ ուշ ստացման համար:

Ծանուցում ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15

«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ

Հեռախոս՝ (+ 37460) 70 11 11

Ֆաքս՝ (+ 37410) 58 24 21

Էլ. հասցե՝ info@fsm.am